

ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ 2015
ՀԱՅԱՍՏԱՆ

*Հրապարակվել է ԱՄՆ պետքարտուղարության Ժողովրդավարության,
մարդու իրավունքների ու աշխատանքի բյուրոյի կողմից*

10 օգոստոսի, 2016թ.

ԱՄՓՈՓԻՉ ԱԿՆԱՐԿ

Սահմանադրությունը երաշխավորում է կրոնի ազատությունը և սահմանում է, որ կրոնական կազմակերպություններն անջատ են պետությունից, սակայն նաև ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին որպես ազգային եկեղեցի և ազգային ինքնության պահպանող: Դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած հանրաքվեով կատարվեցին նշանակալի սահմանադրական փոփոխություններ. Կրոնական ազատությանն առնչվող սահմանադրական նոր դրույթները գործողության մեջ մտան դեկտեմբերի 22-ին: Փոփոխված սահմանադրությունը ներառում է օրենսդրությամբ արդեն ամրագրված մի դրույթ, որով անձը, ում կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայությունը, ունի այն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու իրավունք, և ավելացվել են պետության կողմից կրոնական ազատության արտահայտման նկատմամբ սահմանափակումներ կիրառելու հիմք հանդիսացող հանգամանքները՝ ընդգրկելով պետական անվտանգության պաշտպանությունը: Փոքրամասնական կրոնական խմբերը խոչընդոտների են հանդիպել պաշտամունքային վայրերի կառուցման թույլտվություններ ստանալիս, նրանց հանդեպ խտրականություն է դրսևորվել կրթական, զինվորական, իրավապահ ոլորտներում, հանրային հատվածում զբաղվածության հարցում, կառավարության կողմից արտոնություններ են տրվել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն և նրանց հետ կապված եղել են բացասական մեկնաբանություններ պետական պաշտոնյաների կողմից: Ազգային փոքրամասնությունների հետ կապված փոքրամասնական կրոնական խմբերը, ի տարբերություն էթնիկ հայերին առնչվող փոքրամասնական կրոնական խմբերի, հայտնել են, որ կառավարության հետ ավելի լավ հարաբերություններ ունեն: Կառավարությունը հովանավորել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու առավել մեծ ներկայությունը հասարակական կյանքում և պահանջել է Հայոց եկեղեցու պատմության ու Քրիստոնեական դաստիարակության դասավանդում հանրակրթական դպրոցներում:

Ըստ Եհովայի վկաների՝ քարոզչության ժամանակ որոշ միջադեպեր են արձանագրվել, երբ եղել են ֆիզիկական ոտնձգություններ և հնչեցվել են վիրավորական խոսքեր, թեպետ նրանք փաստում են, որ ոստիկանությունը հիմնականում օպերատիվ կերպով արձագանքել ու դադարեցրել է նման միջադեպերը: Եվրոպական հանձնաժողովի կողմից պատրաստված զեկույցում, որտեղ անդրադարձ է կատարվում 2014թ. դեպքերին, նշվում է, որ չնայած որոշակի առաջընթացին՝ հասարակության կողմից կրոնական փոքրամասնությունների նկատմամբ հանդուրժողականության մակարդակը շարունակել է մնալ ցածր, և շարունակվել են խտրականության դրսևորումները փոքրամասնական կրոնական խմբերի նկատմամբ:

աշխատավայրում և լրատվամիջոցներում: Տարվա ընթացքում լրատվամիջոցները շարունակում էին փոքրամասնական կրոնական խմբերի բացասական լուսաբանումը, հաճախ վերջիններին որակելով «աղանդներ» կամ «պետության թշնամի»: Ըստ մի քանի փոքրամասնական կրոնական խմբերի ու քաղաքացիական հասարակության կազմակերպությունների՝ լրատվամիջոցները նախորդ տարիների համեմատ ավելի քիչ են քննադատել փոքրամասնական կրոնական խմբերին:

ԱՄՆ դեսպանը և դեսպանության ներկայացուցիչները հրապարակավ և պետական պաշտոնյաների հետ հանդիպումների ընթացքում ջատագովել են առավել մեծ կրոնական հանդուրժողականություն՝ շեշտադրելով, որ յուրաքանչյուր ոք պետք է կարողանա անարգել դավանել իր հավատքին և որ պետությունը կրոնական փոքրամասնությունների անդամներին չպետք է դիտարկի որպես սպառնալիք: Դեսպանության պաշտոնյաները տարվա ընթացքում աշխատել են կրոնական ու քաղաքացիական հասարակության առաջնորդների հետ՝ խթանելու կրոնական հանդուրժողականությունը և միջդավանական երկխոսությունը: Դեսպանը և դեսպանության ներկայացուցիչները նաև հանդիպել են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու առաջնորդների հետ՝ որոշակի մտահոգիչ հարցեր քննարկելու նպատակով:

ՄԱՍ I. ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՄՆ կառավարության գնահատմամբ ընդհանուր ազգաբնակչությունը կազմում է շուրջ 3.1 միլիոն (2015թ. հուլիսի դրությամբ): Ըստ 2011թ. մարդահամարի ազգաբնակչության 92 տոկոսն իրենց բնորոշում են որպես Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն հարող: Մյուս կրոնական խմբերը ներառում են. Հռոմեական կաթոլիկներ, Հայկական Մխիթարյան միաբանության անդամ կաթոլիկներ, ուղղափառ քրիստոնյաներ, ավետարանական քրիստոնյաներ, հիսունականներ, յոթերորդ օրվա ադվենտիստներ, բապտիստներ, խարիզմատիկ քրիստոնյաներ, Եհովայի վկաներ, Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցու անդամներ (մորմոններ), Արևելքի Ասորական Կաթողիկոսության Սուրբ Առաքելական Եկեղեցու հետևորդներ, հեթանոսներ, ինչպես նաև քրիստոնյա-մոլոկաններ, եզդիներ, հրեաներ, սունի և շիա մահմեդականներ:

Եզդիները հիմնականում կենտրոնացված են Արագած լեռան շրջանում գտնվող գյուղական բնակավայրերում՝ մայրաքաղաք Երևանից դեպի հյուսիս-արևմուտք: Հայ կաթոլիկները հիմնականում բնակվում են հյուսիսում: Հրեաների մեծ մասը, մորմոններն ու ուղղափառ քրիստոնյաները, ինչպես նաև մահմեդականների փոքրիկ համայնքը՝ հիմնականում շիա մահմեդականներ՝ ներառյալ իրանցիներ և Ժամանակավոր կացություն ունեցող անձինք Միջին Արևելքից, բնակվում են Երևանում:

ՄԱՍ II. ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ՀԱՐԳԱՆՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Իրավական դաշտ

Սահմանադրությամբ երաշխավորվում է մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով՝

քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը: Սահմանադրության համաձայն «կրոնական կազմակերպություններն» անջատ են պետությունից: Միաժամանակ, այն ճանաչում է «Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում»: Սահմանադրությամբ արգելվում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը կրոնական աստվածություն բորբոքելու նպատակով: Այն սահմանում է, որ յուրաքանչյուր քաղաքացի, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայությունը, ունի օրենքով սահմանված կարգով այն այլընտրանքային քաղաքացիական ծառայությամբ փոխարինելու իրավունք:

Դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած հանրաքվեով սահմանադրական նշանակալի փոփոխություններ կատարվեցին, որոնք գործողության մեջ մտան դեկտեմբերի 22-ից: Փոփոխություններից էր խղճի և կրոնի ազատության արտահայտման սահմանափակումը պետական անվտանգությունը պաշտպանելու նպատակով: Նախկինում սահմանափակում հնարավոր էր միայն հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունները պաշտպանելու նպատակով: Փոփոխությունների արդյունքում «եկեղեցի» բառը փոխարինվել է «կրոնական կազմակերպություն» տերմինով այն հողվածում, որտեղ նախատեսվում է կրոնի և պետության անջատ լինելու հանգամանքը: Բացի այդ փոփոխված սահմանադրությունը, ներառում է նաև գործող օրենսդրությամբ արդեն ամրագրված այն դրույթը, որ այն անձը, ում կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է պարտադիր զինվորական ծառայությունը, ունի այն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու իրավունք:

Քրեական օրենսգրքով արգելվում է «կրոնի ազատության իրավունքի իրականացմանը խոչընդոտելը», որի համար սահմանվում է տուգանք 200.000 ՀՀ դրամի չափով (426 ԱՄՆ դոլար) կամ կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

Օրենքով թվարկվում են կրոնական կազմակերպությունների իրավունքները. ապահովել իրենց հավատացյալների հոգևոր-կրոնական կարիքների ու պահանջմունքների բավարարումը, կատարել կրոնական ժամերգություններ, ծեսեր ու արարողություններ, ստեղծել համապատասխան կրոնական ուսուցման խմբեր, զբաղվել աստվածաբանական, կրոնական, պատմամշակութային ուսումնասիրություններով, պատրաստել հոգևորական ծառայության կամ գիտական ու մանկավարժական կադրեր, ձեռք բերել և օգտագործել կրոնական նշանակության առարկաներ ու նյութեր, օգտվել զանգվածային լրատվության միջոցներից, կապեր հաստատել այլ երկրների եկեղեցական կազմակերպությունների հետ և զբաղվել բարեգործությամբ: Ըստ օրենքի, այս իրավունքներն առաջանում են տվյալ կրոնական կազմակերպության գրանցվելու պահից:

Կրոնական խմբերի գրանցման պարտադիր պահանջ չկա, սակայն խմբերը պետք է գրանցվեն, որպեսզի ձեռք բերեն օրենքով սահմանված իրավունքները: Օրենքները չեն սահմանում չգրանցված խմբերի իրավունքները: Որպես իրավաբանական անձ գրանցվելու համար կրոնական համայնքը կամ կազմակերպությունը պետք է Պետեզգիստր ներկայացնի փորձագիտական եզրակացություն Ազգային փոքրամասնությունների ու կրոնի հարցերով վարչությունից առ այն, որ համայնքը կամ կազմակերպությունը համապատասխանում է օրենքի պահանջներին և հիմնված է «պատմականորեն կանոնացված որևէ սուրբ գրքի» վրա,

«զերծ է նյութապաշտությունից և ուղղված է հոգևոր ոլորտները» և ունի առնվազն 200 չափահաս անդամ և իր ուսմունքը մտնում «համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգի» մեջ: Օրենքը չի սահմանում, թե ինչ է նկատի առնվում «զերծ է նյութապաշտությունից» ասելիս և չի հստակեցնում, թե կրոնական որ համայնքներն են համարվում «համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգի» մաս: Այս պայմանները չեն կիրառվում ազգային փոքրամասնությունների, օրինակ՝ մոլդկանների, ասորիների, հրեաների և եզդիների կրոնական կազմակերպությունների համար, եթե դրանք ցանկանում են գրանցվել:

Օրենքներն արգելում են ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, քրեակատարողական համակարգի, փրկարարական ծառայության և զինված ուժերի ծառայողներին լինել կրոնական կազմակերպության անդամ: Այս օրենքները սակայն չեն սահմանում, թե ինչ է նշանակում «անդամակցությունը» կրոնական կազմակերպությանը: Օրենքներն արգելում են ոստիկանության, զինված ուժերի և ազգային անվտանգության ծառայողներին, ինչպես նաև դատախազության աշխատակիցներին և պետական ու քաղաքացիական ծառայողներին օգտագործել իրենց ծառայողական դիրքը «կրոնական միավորումների» շահերի համար և նրանց օգտին քարոզչության համար: Օրենքներով նաև արգելվում է ոստիկանների, դատախազների, այլ պետական ու քաղաքացիական ծառայողների կողմից ծառայողական պարտականությունները կատարելիս այլ կրոնական գործունեություն իրականացնելը: Օրենքը նաև արգելում է զինծառայողներին ձևավորել կրոնական միավորումներ: Թեպետ օրենքը սահմանում է կրոնական կազմակերպությունը որպես հավատի համատեղ դավանության, ինչպես նաև կրոնական այլ պահանջմունքների բավարարման նպատակով ստեղծված քաղաքացիների միավորում, սակայն կրոնական միավորման սահմանում չի տրվում:

Օրենքը Հայաստանյաց Առաքելական Եկեղեցուն հիվանդանոցներում, մանկատներում, գիշերօթիկ դպրոցներում, գործարաններում, և ազատագրկման վայրերում ազատ մուտքի ու մշտական ներկայացուցիչ ունենալու իրավունք է վերապահում, մինչդեռ մյուս կրոնական խմբերը կարող են ներկայացուցիչ ապահովել հիշյալ կառույցներում միայն այդպիսի խնդրանք լինելու դեպքում:

Օրենքն արգելում է «հոգեերսությունը», սակայն չի սահմանում «հոգեերսություն» եզրույթը, որն օգտագործվում է բնութագրելու թե՛ դավանափոխությունը, և թե՛ հարկադիր կրոնափոխությունը:

Օրենքով սահմանվում է, որ հանրակրթական դպրոցներում ուսուցումն աշխարհիկ է, սակայն Հայոց եկեղեցու պատմությունը ներառված է հանրային և մասնավոր դպրոցների ազգային կրթակարգի պարտադիր ուսուցման առարկայացանկում և դասավանդվում է 5-11 դասարաններում, իսկ պետական 50 դպրոցներում 2-4-րդ դասարաններում դասավանդվում է Հայոց եկեղեցու պատմություն/քրիստոնեական դաստիարակություն առարկան՝ որպես Կրթության նախարարության պիլոտային ծրագիր: Հայաստանյաց Առաքելական Եկեղեցին իրավունք ունի մասնակցել այդ առարկայի ուսումնական ծրագրի և դասագրքերի մշակմանը, այն դասավանդող ուսուցիչների որակավորման պահանջների սահմանմանը: Եկեղեցին կարող է նաև առարկան դասավանդող ուսուցիչների թեկնածություններ առաջադրել, սակայն նրանք հանդիսանում են պետական աշխատողներ: Բոլոր աշակերտները պարտավոր են

մասնակցել այս դասերին. առարկայից հրաժարվելու հնարավորություն սահմանված չէ: Օրենքը Հայաստանյաց Առաքելական Եկեղեցուն իրավունք է շնորհում կազմակերպել կրոնի կամավոր արտաձրագրային դասընթացներ պետական կրթական հաստատություններում: Մյուս կրոնական խմբերը կարող են իրենց անդամներին կրոնական ուսուցում տրամադրել իրենց պատկանող հաստատություններում:

Այն անձանց համար, որոնց կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայություն անցնելը, օրենքը սահմանում է ընդհանուր երկամյա զինվորական ծառայության երկու այլընտրանք՝ այլընտրանքային (զենքի հետ կապ չունեցող) զինվորական ծառայություն 30 ամիս տևողությամբ կամ այլընտրանքային աշխատանքային ծառայություն 36 ամիս տևողությամբ: Այլընտրանքային ծառայությունից խուսափելը շարունակում է համարվել քրեորեն պատժելի արարք, որի համար նախատեսված պատժամիջոցները պայմանավորված գործի հանգամանքներից կարող են լինել 2 ամսվա կալանքից մինչև 8 տարվա ազատազրկում:

Աշխատանքային օրենսդրությամբ գործատուներին արգելվում է աշխատակիցների կրոնական հայացքների մասին տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը:

Օրենքի համաձայն կրոնական հիմքի վրա ձևավորված խմբերը չեն ճանաչվում որպես քաղաքական կուսակցություն:

Քրեական օրենսգրքով արգելվում է կրոնական ատելության հրահրումը բռնության, հրապարակային հայտարարությունների կամ լրատվության միջոցով և դրա համար սահմանվում է տույժ 200.000-ից 500.000 ՀՀ դրամի սահմաններում (426-1.064 ԱՄՆ դոլար) կամ ազատազրկում 2-ից 6 տարի ժամկետով:

Կառավարության գործունեությունը

Եղել են հաղորդումներ, երբ գորակոչիկների հանդեպ ճնշումներ են եղել հոգուտ Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու: Կրոնական ու քաղաքացիական հասարակության խմբերը կառավարությանը հորդորել են հստակեցնել այն օրենքները, որոնք վերաբերում են կրոնին: Փոքրամասնական կրոնական խմբերը խոչընդոտների են բախվել պաշտամունքի վայրեր կառուցելու թույլտվություններ ստանալիս, նրանց նկատմամբ եղել է խտրականության կրթության ոլորտում, զինված ուժերում, իրավապահ համակարգում, հանրային հատվածում զբաղվածության հարցում, առկա է եղել կառավարության արտոնյալ վերաբերմունք Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու հանդեպ և վերջինս մշտապես ներկայացված է եղել հասարակական կյանքում, և պետական պաշտոնյաների կողմից եղել են բացասական մեկնաբանություններ:

Ըստ հասարակական կազմակերպությունների ու կրոնական խմբերի՝ զինված ուժերում ծառայության անցնող նորակոչիկները զինվորական կոմիսարիատում հարցաշար են լրացնում, որտեղ պետք է նշեն իրենց կրոնական պատկանելությունը: Ըստ հաղորդումների այդ հարցի ձևակերպումը եղել է՝ արդյոք անձը Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու անդամ է, թե՞ որևէ «աղանդի»: Տարվա ընթացքում հրապարկված Հելսինկյան կոմիտեի զեկույցի համաձայն, որտեղ անդրադարձ է կատարվել 2014թ.-ին, ներկայացվել են դեպքեր, երբ զինվորական հոգևորականները «բացատրական ու բարոյախրատական ցուցումներ» են տվել փոքրամասնական կրոնական կազմակերպությունների անդամներին: Զեկույցում

հիշատակվում էր մի դեպք, երբ պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող փոքրամասնական կրոնական խմբի անդամ զինվորին Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու քահանայի ցուցումով ստիպել էին աղոթք ասել, իսկ հրամանատար սպան ճնշում էր գործադրել, որ նա հեռանա իր եկեղեցուց: Ըստ զեկույցի՝ գորակոչիկն իր կամքին հակառակ 8 ամիս մասնակցել էր Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու կրոնական ծիսակարգերին:

Շարունակվել են լրատվամիջոցներում այն հաղորդումները, որ զինվորական ծառայության ընթացքում կանոնավոր կերպով տեղի են ունենում Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու խմբակային մկրտություններ՝ բանակի հրամանատարության աջակցությամբ: Լրատվական հաղորդումներում պատկերվել են 4 և ավելի գորակոչիկների խմբակային մկրտության, ինչպես նաև այլ զինծառայողների միաժամանակյա մկրտության դեպքեր: Ի տարբերություն նախորդ տարիների՝ փոքրամասնական կրոնական խմբերի կողմից հաղորդումներ չեն եղել իրենց անդամների նկատմամբ մկրտվելու հարցում ճնշում գործադրելու կոնկրետ դեպքերի վերաբերյալ: Մասնավոր «Առավոտ» օրաթերթում հունվարին մի հրապարակում կար, որտեղ ավետարանական երիտասարդի հայրը նշում էր, որ իր կարծիքով բանակում մկրտության հարցում որդու նկատմամբ 2014թ. ճնշում է եղել Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու կողմից: Նույն հրապարակման մեջ ներկայացված էր նաև Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու հոգևորականի խոսքը, ով ժխտում էր մկրտության համար բանակում որևէ կերպ ճնշում գործադրելու ու ընդհանրապես բանակում փոքրամասնական կրոնական խմբերի նկատմամբ խտրականության դրսևորումը: Ըստ հոգևորականի բանակում Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու առաքելությունը զինվորներին եկեղեցու ու երկրի պատմությանը ծանոթացնելն է և հոգևոր գիտելիքների փոխանցելը. այդ շրջանակներում էթե կան «աղանդավորությանը» հարող զինվորներ, «մենք ոչ թե խտրականություն ենք դնում, այլ, մեր մոլորված զինվորը համարելով, նրանց ավելի շատ ջերմության մեջ ենք պահում և փորձում ենք նրանց սխալ ճանապարհներից հեռու պահել»: Նոյեմբերին Պաշտպանության նախարարությունը հայտարարեց Մարդու իրավունքների ու բարեվարքության կենտրոն ստեղծելու մասին, որը նպատակ ունի զինված ուժերում խթանել ու պաշտպանել մարդու իրավունքները, այդ թվում՝ փոքրամասնությունների իրավունքներն ու կրոնական հանդուրժողականությունը:

Կրոնական խմբերն ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները շարունակել են հորդորել կառավարությանը վերացնել կրոնին առնչվող հարցերը կարգավորող գործող օրենսդրության իրավական բացերը, ոչ հստակ դրույթները և հակասությունները և պարզաբանել արդյո՞ք կրոնական կազմակերպություններն իրավասու են և կարող են գրանցվել որպես իրավաբանական անձ. և ավելի ճշգրիտ ու հստակ սահմանել օրենքի կիրառման շրջանակը, ինչը բազմիցս առաջարկվել է Եվրոպայի Խորհրդի Վենետիկյան հանձնաժողովի կողմից: Փոքրամասնական կրոնական խմբերն ու քաղաքացիական հասարակության խմբերը նաև մտահոգություն են հայտնել փոփոխված սահմանադրության վերաբերյալ, մասնավորապես այն դրույթը, որով թույլատրվում է սահմանափակել կրոնի ազատությունը «պետական անվտանգության», այլ ոչ թե սուկ հասարակական անվտանգության նպատակով:

Մի շարք փոքրամասնական քրիստոնեական խմբեր հայտնել են, որ վերջին շրջանում հավաքների համար վայրեր վարձակալելու հետ կապված դժվարություններից ելնելով՝

կրոնական կազմակերպություններն այդ նպատակներով օգտագործել են իրենց սեփական կառույցները՝ նոր կամ արդեն իսկ գոյություն ունեցող: Ըստ մի շարք կրոնական խմբերի՝ տեղական իշխանությունների ներկայացուցիչները խոչընդոտել են կրոնական խմբերին պատկանող հողատարածքներում պաշտամունքային շինությունների հետ կապված կառուցապատման կամ ճարտարապետա-շինարարական նախագծման թույլտվությունների ձեռք բերման ջանքերին: Մի քանի փոքրամասնական դավանական խմբերի հաղորդամար պաշտամունքի վայրերի կառուցելու շինարարական թույլտվությունը տրվել է միայն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու համաձայնությամբ, և վերջինս փոքրամասնական հավատքի նոր պաշտամունքային շինությունների կառուցման հարցում կիրառել է արգելք սահմանելու դե-ֆակտո իրավասություն:

Հուլիսի 29-ին վճռաբեկ դատարանը (սահմանադրականության հետ կապ չունեցող գործերով բարձրագույն դատական մարմինը, որը երաշխավորում է օրենքի միօրինակ կիրառումը) մերժեց Եհովայի վկաների վերջնական բողոքն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի որոշման, որով «հարևաններից ստացած բողոքների» հիման վրա նրանց մերժվել էր պաշտամունքի երեք վայրեր կառուցելու թույլտվության տրամադրումը: Ըստ Եհովայի վկաների ու մյուս կրոնական խմբերի՝ շինարարական թույլտվություններ ստանալու հարցում ավելի հեշտ է եղել, երբ դիմում է ներկայացվել անհատի կողմից կամ էթե դիմումում որպես նպատակ հիշատակվել է շինության որևէ այլ տիպ և ոչ թե պաշտամունքային կառույց:

Ապրիլի 1-ին լրատվամիջոցներում հաղորդում եղավ, որ 2014թ. կառավարությունը Երևան քաղաքի ավագ դպրոցներից մեկի կառավարումը փոխանցել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն՝ վերջինիս դիմումի հիման վրա: Կառավարության որոշման համաձայն դպրոցի հոգաբարձուների խորհրդի 7 անդամներից 4-ը նշանակվել էին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կողմից: Դպրոցը շարունակում էր գործել որպես հանրակրթական հաստատություն: Ըստ Հելսինկյան կոմիտեի հայաստանյան գրասենյակի դպրոցի ոչ աշխարհիկ կառավարումը հակասում է կրթության մասին օրենքին ու սահմանադրությանը:

Եզդիական համայնքի ներկայացուցիչները շարունակել են իրենց դժգոհությունը հայտնել Հայոց եկեղեցու պատմություն առարկայի պարտադիր լինելու վերաբերյալ, որը նրանք դիտարկում են որպես կրոնական դաստիարակություն: Նման մտահոգություններ շարունակել են հնչեցնել նաև հասարակական կազմակերպությունները, կրոնական կազմակերպությունները, աթեիստները, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ոչ-հավատացյալ անդամները: Փոքրամասնական կրոնական խմբերի հաղորդումների համաձայն իրենց անդամների կողմից տարվա ընթացքում բողոքներ այս առարկայի դասաժամերին ուսուցիչների կողմից աշակերտների նկատմամբ խտրական վերաբերմունքի հետ կապված չի եղել: Եղել են հաղորդումներ, որ առարկան դասավանդվել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու որոշ հոգևորականների կողմից:

Լրատվամիջոցներում հաղորդումներ են եղել, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հոգևորականներն այցելել են պետական ֆինանսավորմամբ գործող մանկապարտեզներ, այդ թվում նաև եկեղեցական տոների ընթացքում, ինչպես նաև եղել են մանկապարտեզի սաների այցելություններ եկեղեցի: 2014թ. դեկտեմբերին «Ասպարեզ» առցանց լրատվականում հրապարակում կար, որ Գյումրու քաղաքապետարանում անցկացված հանդիպման ժամանակ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչներն առանց Կրթության նախարարության թույլտվության քաղաքի պետական մանկապարտեզների տնօրեններին

բաժանել են կրոնական երգերի ժողովածու: Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու նման միջամտություններն, ըստ «Ասպարեզի» դիտարկման, մանկապարտեզի դեկավարության համար դժվարացնում են նշվող տոների աշխարհիկ ու կրոնական տարրերի տարանջատումը:

Տարվա ընթացքում Եհովայի վկաների հրապարակած զեկուցում նշվում էր, որ չնայած օրենքով սահմանված է, որ կրոնական խմբերին կատարված նվիրատվություններն ազատված են հարկերից, կառավարությունը Եհովայի վկաներից պահանջել է ներմուծված կրոնական գրականության համար, որը ստացվել էր որպես նվիրատվություն և անվճար բաժանվել երկրում, կատարել «տասնյակ հազարավոր եվրոյի հասնող» (տասնյակ հազարավոր դոլարի հասնող) վճարումներ ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) գծով: Ըստ զեկույցի Եհովայի վկաները 2010թ-ից մինչև 2015թ. հունիս ժամանակահատվածում 8 անգամ ԱԱՀ-ից ազատման վերաբերյալ դիմում են ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարանին (ՄԻԵԴ) այն բանից հետո, երբ սպառվել են ներպետական իրավական կարգավորման բոլոր միջոցները: Զեկույցը նշում էր, որ հուլիսին ԱԱՀ-ի դրույքաչափը նվազեցվել է, սակայն Եհովայի վկաները դեռ պարտավոր են վճարել այն՝ նոր դրույքաչափի համաձայն: Մասնավոր ընկերությունները և աշխարհիկ հասարակական կազմակերպությունները նույնպես հայտնում են նման դժվարությունների մասին, բայց նրանց համար չկան այն իրավական կարգավորումները, որոնք գործում են կրոնական խմբերի համար: Այլ փոքրամասնական կրոնական խմբերից նույնպես եղել են հաղորդումներ արտասահմանից ներմուծված նվիրատվություններն ԱԱՀ-ով հարկելու վերաբերյալ. նրանք սակայն որոշել են դատական կարգով խնդրին հետամուտ չլինել:

«Համագործակցություն հանուն ժողովրդավարության» հասարակական կազմակերպության զեկույցի համաձայն իրավապահ կառույցների աշխատակիցների և այլ հանրային ծառայողների անդամակցությունը կրոնական կազմակերպություններին արգելող իրավական դրույթները կառավարության կողմից կարող են կիրառվել այդ աշխատողների իրավունքները սահմանափակելու նպատակով: «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» հասարակական կազմակերպությունը նաև հայտնում էր, որ հաշվի առնելով պետական կառույցներում Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու արտոնյալ դերակատարումը, գործնականում այս դրույթները մեկնաբանվում էին որպես Հայաստանյաց Առաքելական Եկեղեցուց զատ որևէ այլ կրոնական խմբի հարելու արգելք: «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոնը և մի շարք կրոնական խմբեր նշում էին, որ կառավարության կողմից համակարգային կերպով խտրականություն էր դրսևորվում զինված ուժերում ու իրավապահ կառույցներում, որպեսզի հեռացվեն այն աշխատակիցները, ովքեր հարում էին Հայաստանյաց Առաքելական Եկեղեցուց զատ որևէ այլ կրոնական հայացքների: Կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչների հաղորդումների համաձայն պետական օղակում աշխատող իրենց անդամներին առաջարկվել է ընտրություն կատարել աշխատանքի և դավանանքի միջև:

Հոկտեմբերի դրությամբ Եհովայի վկաների 183 անդամներ, որոնց կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայություն անցնելը, անցնում էին այլընտրանքային աշխատանքային ծառայություն: Հելսինկյան կոմիտեի ազգային կառույցի զեկույցի համաձայն այլընտրանքային ծառայության հետ կապված լուրջ խնդիրների չեն եղել: Եհովայի վկաները փաստում էին, որ այլընտրանքային ծառայության դիմումները քննության

առնող ու համակարգող պետական հանձնաժողովը եղել է պատրաստակամ, իսկ ծրագիրը նորմալ ընթացել է:

Ըստ տարբեր կրոնական խմբերի ու հասարակական կազմակերպությունների, որոնք ջատագովում են կրոնական հանդուրժողականություն և հարգանք, խտրականությունն ընդդեմ կրոնական կազմակերպությունների, բացառությամբ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, հիմնականում հրահրվել են կառավարության հռետորաբանության պատճառով, որով ազգային ինքնությունը նույնացվում է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հետևորդ լինելու հետ:

Հասարակական կազմակերպությունների և կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչները նշում են, որ պետական պաշտոնյաները հաճախ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուց զատ մյուս կրոնական խմբերի մասին արտահայտվելիս օգտագործում են արհամարհական «աղանդ» բառը, թեպետ պաշտոնյաներն այդ բառը չեն սահմանում:

«Առավոտ» օրաթերթում տեղ գտած հրապարակման համաձայն սեպտեմբերի 12-ին եկեղեցական տոնը նշելու ժամանակ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Արարատ քաղաքում գտնվող եկեղեցին կազմակերպել էր երթ ընդդեմ «աղանդների», որին մասնակցում էին Արարատի քաղաքապետարանի ղեկավարությունը, Արարատի համայնքապետարանը, այնտեղ տեղակայված գորամասը, հիվանդանոցը, մի շարք դպրոցներ ու այլ կառույցներ: Ըստ լրատվական թողարկման երեք մղոնի երկայնքով անցնող երթի մասնակիցների թիվը հասել է մոտ 1000 հոգու:

Հունիսի 10-ին Հայաստանի երիտասարդական հիմնադրամը (պետական ֆինանսավորմամբ գործող հիմնադրամ, որի գործունեությունը համակարգում է իշխող Հանրապետական կուսակցության պատգամավորներից մեկը և որտեղ նախագահում է վարչապետ Հովիկ Աբրահամյանը) Երևանի քաղաքապետարանին կից երիտասարդության հարցերի խորհրդի և մի շարք ՀԿ-ների հետ միասին հայտարարեց երիտասարդների համար «Ոչ ավանդական կրոնական կազմակերպությունների քայքայիչ գործունեության մասին» խորագրով դասընթացների շարք անցկացնելու մասին: Հայտարարության համաձայն դասընթացավարները, որոնց թվում էին նաև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու քահանաներ, նպատակ ունեին երիտասարդներին ներկայացնել «Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, այլ կրոնական կազմակերպությունների դավանանքի, մարդու վրա նրանց ներգործության առանձնահատկությունների, հետապնդվող շահերի վերաբերյալ գիտելիքներ»: Ըստ կազմակերպիչներից մեկի՝ նրանք ցանկանում էին, որ երիտասարդները կարողանան հասկանալ, թե ինչ է «աղանդը» և աշխատեն նրանց հետ, ովքեր «աղանդներին» անդամագրվելու վտանգի առաջ են կանգնած: Կազմակերպիչները նաև հայտարարեցին, որ կտպագրվեն կրոնական անվտանգության վերաբերյալ թոուցիկներ և կբաժանվեն Երևանում և մարզերում, կօգտագործվեն նաև սոցիալական ցանցերը՝ «քայքայիչ աղանդների» գործունեության վերաբերյալ հանրությանն իրազեկելու համար: Պետական պաշտոնյաները և մյուսները, որոնք հիշատակում են «աղանդներին», որևէ կազմակերպության անուն չէին նշում, սակայն հասարակական կազմակերպությունները և մյուսներն ասում էին, որ այդ տերմինը վերաբերում է փոքրամասնական քրիստոնեական խմբերին: «Մեղիալար» առցանց լրատվական պորտալը հղում կատարելով այդ ծրագրին նշել էր. «պետական մակարդակով

ատելություն ու անհանդուրժողականություն է սերմանվում այլ կրոնական կազմակերպությունների նկատմամբ»:

Խորհրդարանի բարձրաստիճան պաշտոնյաներն ազգային ժողովի ամբիոնից հնչած իրենց ելույթներում բացասական հայտարարություններ են արել՝ խոսելով իրենց որակմամբ «աղանդների», երկրի և ազգային ինքնության համար դրանց ստեղծած սպառնալիքների և դրանց դեմ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության մասին: Օրինակ՝ հոկտեմբերի 7-ին ազգային ժողովի փոխխոսնակը հանրային հեռուստատեսությանն ու ռադիոյին հորդորում էր ավելացնել այն հաղորդումները, որոնց ընթացքում Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչները «աղանդների» դեմ պայքարի համատեքստում կկարողանան ավելի շատ խոսել եկեղեցու պատմության մասին: Հանրապետական կուսակցության խորհրդարանական խմբակցության ղեկավարը ևս նույնաբնույթ մեկնաբանություններ է արել՝ ասելով, որ բավական գումարներ են մուտք գործել երկիր «մեր ազգային արժեքները ոչնչացնելու, մեր ավանդույթները, մեր ընտանիքի ամրությունը, մեր եկեղեցին քանդելու նպատակով... դրսից ստացված այս գումարները լուրջ ազդեցություն են ունենում մեր հավատքի վրա... այսօր «աղանդների» վրա բավականին գումարներ են դրվում, որպեսզի կարողանան պառակտել եկեղեցին»:

Ազգային փոքրամասնությունների հետ կապված փոքրամասնական կրոնական խմբերը, ինչպիսիք են՝ հրեաները, առաքելական ասորիները, ի տարբերություն էթնիկ հայերին առնչվող փոքրամասնական կրոնական խմբերի, հայտնում են, որ կառավարության հետ ավելի լավ հարաբերություններ ունեն:

Մաս III. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐԳԱՆՔԸ ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶՍՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ

Ըստ Եհովայի վկաների՝ քարոզչության ժամանակ որոշ միջադեպեր են արձանագրվել, երբ իրենց անդամների հանդեպ եղել են ֆիզիկական ոտնձգություններ և հնչեցվել են վիրավորական խոսքեր: Ինչ-որ անձինք շուտ են տվել Եհովայի վկաների գրքերի ստենդները՝ պատճառելով փոքր վնաս: Խմբի հաղորդմամբ ոստիկանությունը սովորաբար օպերատիվ արձագանքել է իրենց բողոքներին և մի քանի իրավախախտեր իրենց կրկնվող վարքագծի համար տուգանվել են: Այլ դեպքերում, մեղավորները պաշտոնապես ներողություն են խնդրել և այլևս չեն միջամտել Եհովայի վկաների գործունեությանը: Եհովայի վկաները տարվա ընթացքում իրենց անդամների դեմ ուղղված միջադեպերի վերաբերյալ քանակական տվյալներ չեն հաղորդել:

Եվրոպական հանձնաժողովի կողմից պատրաստված զեկույցում, որը հրապարկվեց մարտին և ներկայացնում էր 2014թ. ընթացքում գրանցված առաջընթացը ԵՄ-Հայաստան հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրի շրջանակում, նշվում էր, որ չնայած որոշակի առաջընթացին՝ հասարակության կողմից կրոնական փոքրամասնությունների նկատմամբ հանդուրժողականության մակարդակը շարունակել է մնալ ցածր, և շարունակվել են խտրականության դրսևորումները փոքրամասնական կրոնական խմբերի նկատմամբ աշխատավայրում և լրատվամիջոցներում: Զեկույցում կրոնական հողի վրա դրսևորված խտրականության կոնկրետ դեպքեր չէին հիշատակվում:

Հելսինկյան կոմիտեի 2014թ. դեպքերի վերաբերյալ զեկույցում հիշատակվում են մի շարք դրվագներ, երբ առցանց լրատվամիջոցներում փոքրամասնական կրոնական խմբերը

բացասական լույսի ներքո են ներկայացվել: Օրինակ՝ mamul.am կայքում եղել է «Աղանդավորներ. կամ սատանայի ծունդներ» վերտառությամբ հրապարակում, որտեղ հեղինակը Հայաստանյաց Առաքելական Եկեղեցուց բացի մյուս կրոնական խմբերին համեմատել է «մարմնավաճառների» հետ:

Ըստ մի շարք քրիստոնեական փոքրամասնական կրոնական խմբերի և հասարակական կազմակերպությունների՝ թեպետ որոշ լրատվամիջոցներ շարունակել են փոքրամասնական կրոնական խմբերին պիտակել որպես «աղանդներ» և հեռարձակել են կրոնական փոքրամասնությունների մասին չստուգված ու կողմնակալ տեղեկատվություն պարունակող քննարկումներ ու լրատվություն, սակայն նախորդ տարիների համեմատ լրատվամիջոցներում փոքրամասնական կրոնական խմբերի վերաբերյալ քննադատությունն ավելի քիչ է եղել և ավելի մեծ պատրաստակամություն է դրսևորվել այդ խմբերի տեսակետներն իրենց լուսաբանումներում ներկայացնելու հարցում: Կրոնական խմբերի ներկայացուցիչները նշում են, որ որոշ լրագրողներ օգտագործել են իրենց հրապարակումները կրոնական հանդուրժողականություն քարոզելու նպատակով, սակայն խմբերի ներկայացուցիչները հիասթափություն են հայտնել իրենց գործունեության լուսաբանման բացակայության վերաբերյալ:

Շելսինկյան կոմիտեն, երբեմն նաև այլ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ, ինչպիսիք են՝ Գորիսի մամուլի ակումբը, Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի Գյումրու մասնաճյուղը և այլ կազմակերպություններ, շարունակել է անցկացնել ուսուցումներ քաղաքացիական հասարակության, իրավաբանների և լրագրողների համար կրոնական փոքրամասնությունների հետ կապված հարցերի նրբությունների շուրջ՝ ջանալով խթանել կրոնական հանդուրժողականությունը՝ կրոնական հարցերն ավելի լավ պատկերացնելու, իսկ լրագրողների դեպքում՝ ավելի լավ լուսաբանելու միջոցով: Տարբեր ավետարանական խմբերի գնահատումների համաձայն այդ ուսուցումը հանգեցրել է կրոնական հարցերի շուրջ առավել ճշգրիտ լուսաբանման:

ՄԱՍ IV. ԱՄՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դեսպանը և դեսպանության ներկայացուցիչներն հրապարակավ և պետական պաշտոնյաների, այդ թվում՝ Պաշտպանության նախարարությունում հանդիպումների ընթացքում խրախուսել են խղճի ազատությունը և միջեկեղեցական երկխոսությունը՝ ջատագովելով յուրաքանչյուր քաղաքացու իր դավանանքին հետևելու իրավունքը և շեշտելով, որ կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչները չպետք է համարվեն սպառնալիք:

Դեսպանն հաճախակի հանդիպումներ է ունեցել Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու Կաթողիկոսի (ընդհանուր առաջնորդ), մյուս եկեղեցիների առաջնորդների հետ՝ խթանելու կրոնական ազատությունն ու հանդուրժողականությունը և շեշտելու կրոնական խմբերի կողմից իրենց հավատքին անարգել դավանելու անհրաժեշտությունը: Մի այդպիսի հանդիպման ժամանակ, դեսպանի կողմից հանրակրթական դպրոցներում Հայոց եկեղեցու պատմության դասերին տեղի ունեցող պրոսեդիտիզմի վերաբերյալ Միացյալ Նահանգների մտահոգությունները հնչեցնելուց հետո, Կաթողիկոսը խնդրեց եկեղեցու առաջնորդներին

տեղյակ պահել բոլոր այն դեպքերի մասին, երբ առարկան դասավանդող ուսուցիչները «անցնում են սահմանը»: Դեսպանը նաև երկու առանձին միջոցառում է անցկացրել, մեկը եզդիական համայնքի առաջնորդների հետ, մյուսը կրոնական առաջնորդների հետ՝ քննարկելու կրոնական ազատությանն առնչվող հարցերը:

Դեսպանության պաշտոնյաները հանդիպումներ են ունեցել կրոնական և ազգային-կրոնական փոքրամասնությունների լայն շրջանակի ներկայացուցիչների հետ, այդ թվում կաթոլիկների, ավետարանականների և այլ բողոքականների, Եհովայի վկաների, մորմոնների, եզդիների, առաքելական ասորիների և հրեաների հետ, ինչպես նաև Հայաստանյազ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչների հետ՝ քննարկելու խղճի և կրոնի ազատության իրավունքն իրացնելու շուրջ երկրում տեղ գտած զարգացումները: Մի շարք փոքրամասնական դավանական խմբեր հայտնում են, որ կրոնական ազատության ու հանդուրժողականության հարցում դեսպանության ուղղակի կամ անուղղակի ներգրավվածությունը տվել է «իր պտուղները»: Դեսպանության պաշտոնյաները նաև հանդիպումներ են ունեցել քաղաքացիական հասարակության խմբերի հետ՝ քննարկելու երկրում կրոնական ազատության հետ կապված իրավիճակը և կրոնական հանդուրժողականության հետ կապված խնդիրները: